

ՀԱՍՏԷ
M. ARCHAM
Poste Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբա-
գրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

Այգի մը ապագայ
կեանքի բարեփոխման
առաջին պայմանն է
Միութիւնը:

«Միութիւն»ը ա-
մեն տեղ ձրի կը շար-
ուի:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ա. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ

1897

ԱԹԵՆՔ

ԹԻՒ 10

ԲՍՈՒԵՐՈՒ ՀԵՏ ՁԵՍԱՂԱՆԻ

«Միութիւն»ի ծրագրի մէջ
հրատարակեցինք Դաշնակցականի մը
կարծիքը միութեան մասին: Մեր
ընթերցողները անշուշտ ուշի ուշով
կարդացին այդ գրութիւնը որ այն
կուսակցութեան մէկ կարեւոր ան-
դամին գրչէն ելած էր և որուն հետ
սովորութեամբ անձնագէտ ևս տե-
սակցութիւններ ունենալու: Մենք
անկողմնակալութեամբ հրատարակե-
ցինք այդ գրութիւնը, մեղի վերա-
պահելով դիտողութիւններ ընկալ-
լիքաւորքը: Այժմ մեր այս իրաւուն-
քը կ'ուզենք ի գործ դնել:
Պարոն Դաշնակցականը կ'ըսէ.
«Տղայամտութիւն է կարծել որ Դաշ-
նակցականները դէմ են միութեան
խնդրին»: Ուրիշ տեղ մը կը կրկնէ.
«Դաշնակցականները չեն կարող չի-
փաթիլ միութեան»: Յետոյ բայց...»
ըսելով կը մտնէ խել մը առարկու-
թիւններու մէջ և սա եզրակացու-
թեան կը հասնի. «Հաստ իս, երկու
կուսակցութեանց Միութեան միակ
պայմանը կրնայ ըլլալ Արփարակա-
նայ(1) ապակեղրոնացումը ընդու-
նիլը: Երբ այդ սկզբունքը կ'ընդու-
նին Նոր-Հնչակեանները, այն ատեն
ամեն մի տեղական Նոր-Հնչակեան
մասնաճիւղ կրնայ ազատ կերպով
միանալ տեղւոյն Դաշնակցական մարմ-
նոյն հետ: Այս է Միութեան միակ
և միակ ճանապարհը, իսկ ասոր ա-

նունը ձուլում է: Ուրիշ ճանապարհ
չկայ»:

Կը տեսնե՞ս, բարեմիտ ընթեր-
ցող, քիչ մը վերը միութեան փա-
փաքող Դաշնակցականը, քանի մը
տող վարը անկարելի կը հռչակէ
Միութիւնը, իրաւունք չունի՞նք ըսե-
լու որ բառերու հետ կը խաղանք:

Եւ ի՞նչ է այդ «Ապակեղրոնա-
ցում»ը որ իբրեւ հոռոմէական եկեղե-
ցի մը մեզ կը ներկայացնեն, ուրկէ
դուրս չկայ փրկութիւն: Նորէն բառի
հետ խաղալ...

Մառը իր պտուղէն կը դատեն,
արդ, պահ մը քննեք թէ այդ երկու
աւարբեր ծառերը Հնչակեան-Կեղրո-
նացում և Դաշնակցական-Ապակե-
ղրոնացում, ի՞նչ տարբեր տարբեր
պտուղներ տուած են և որո՞ւն պը-
տուղը լաւագոյն եղած է:

Հնչակեանները թերորական գոր-
ծողութիւններ ըրին Պոլիս և գա-
ւառները և մասնիչներ սպաննեցին:

Նոյնը ըրին Դաշնակցականներն
ալ:

Հնչակեանները զանազան զին-
եալ խմբեր կ'ազդեցին գաւառներու
մէջ:

Նոյնը ըրին Դաշնակցականներն
ալ:

(Սա տարբերութիւնը կար միայն
որ Հնչակեան խումբ մը «Հրոսա-
կախում» կը կոչուէր, իսկ Դաշ-
նակցական մը «Հայդուկախում»:
Նորէն բառի խաղեր):

Հնչակեանները ցոյց ըրին Պոլ-
սոյ մէջ:

Նոյնը ըրին Դրօշակեանները:

Հնչակեանները հարուստներէն
ստակ հաւաքեցին սպառնալիքով:

Նոյնը ըրին Դրօշակեանները:

Հնչակեաններու մէջ զեղծումներ
պատահեցան:

Նոյնը պատահեցաւ Դրօշակեան-
ներու մէջ:

Հնչակեաններէն ոմանք իրենց
ձեռքը գտնուած միջոցներէն օգուտ
քաղեցին անձնական կիրքեր ու փա-
ռասիրութիւններ յաղեցնելու հա-
մար:

Նոյն բանը ըրին Դրօշակեաննե-
րէն ոմանք:

Հնչակեանները բոլորականտի հա-
մար թերթ մը կը հրատարակեն ու
կը ցրուեն:

Նոյնը կ'ընեն Դրօշակեանները:

* * *

Իրար չխաբենք. այդ ծառերու
պտուղները միեւնոյնն են: Բառերու
հետ չխաղանք. կեղրոնացում և ա-
պակեղրոնացում, գործնականի մէջ
նոյն արդիւնքը տուին: Կուսակցա-
մոլութեան եռանդէն կուրցած ըլլա-
լու է մարդ որ չտեսնէ ասիկա:

* * *

Եւ ինչո՞ւ կարելի չըլլայ ուրոյն
գոյութիւն ունենալով երկու մար-
միները դաշնակցին իրարու հետ.
մին կեղրոնացումը ընդունելով հան-
դերձ և միւսը ապակեղրոնացումը:

Այսօր կը տեսնենք որ հանրա-
պետական և ազատական ազգ մը,
ինչպէս Ֆրանսա, դաշնակցած է ա-
մենէն բռնապետական մէկ պետու-
թեան, Ռուսիոյ, հետ և համաձայ-
նութեամբ կը գործեն ամեն խնդրի
մէջ. միթէ նոյն բանը չ'ընք կրնար
ընել մենք ալ:

Բայց մենք, աւա՛ղ, ամեն խնդրի
մէջ, ամենէն սուրբ խնդրին մէջ,
եսասիրութեան, քինախնդրութեան,
նախանձի և պոտելութեան գերին ենք
և այս ամենք կը ջանանք ծածկել
սկզբունքի տարբերութիւններու ե-
րեւոյթին տակ:

Ամօ'թ մեզի:

* * *

(1) Պ. Դաշնակցականը չարամիտ
հոգատարութեամբ մը միշտ կը ջա-
նայ «Հնչակեան» բառը գործածելէ
զրուշանալ և Ն ա ղ ա ր բ է կ ե ա ն ք
կամ Ա ր փ ի ա ռ կ ա ն ք կ'ըսէ:
Այդ ալ, ըստ մեզ, բառերու հետ
խաղալ է:

Բայց թո՛ղ գիտնան յեղափոխական վարիչ մարմինները որ ժողովուրդը ապուշ է, միամիտ է՝ իրենց կարծածին պէս: «Կեդրոնացում» կամ «Ապակեդրոնացում» բառերը չողացնելով իրեն աչքին առջև չեն կրնար համակրանք չափել: Գործ պէտք է տեսնել:

Հիմա, երբ Կրետէ ոտք ելած ազատութեան գրօլը կը պարզէ, երբ Յունաստան կը շարունակէ պատերազմը և երբ Սուլթանը, շուտով չմտած ո՛ր դուռ զարնելը չգիտեր, երբ Մակեդոնական ապստամբները և աւազակախմբերը իրենց հարուածները կը տեղացնեն տաճիկ վոհմակներու վրայ: Ի՞նչ կ'ընեն մեր պարոն կեդրոնականները և ապակեդրոնականները:— Ասդին անդին, սրճարաններու մէջ, վիճաբանութիւն կ'ընեն, բառերու հետ կը խաղան, և կը դատապարտեն ժողովուրդը որ դրամական օժանդակութիւն չընեն իրենց, . . . որպէս զի սուրճին հետ կարենան քիչ մըն ալ օդի խմել:

* * *

Իսկ ժողովուրդը իր վերջին բառը ըսած է արդէն. «Միացէք ու ետքը դիմեցէք ինծի:»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՑՑԷ ՄԻՈՒԹԻՒՆ

Մրիկներով պաշարուած ովկէանի մը երեւոյթը ունի հիմա մեր յեղափոխութիւնը, այն ատեն որուն ամենէն աւելի պէտք կը տեսնուէր համախորհուրդ գործելու, և դուք այս ովկէանին մէջ փարոսի մը երեւոյթը կ'առնէք երբ կը հրաւիրէք ամենքն ալ «Միութեան»:

Կը դարմանամ, մենք որ տարիներ առաջ, 1860ին Պէյքօղի մէջ՝ երբ Սահմանադրութեան առաջին տարեդարձը կը տօնէինք, Միութեան երգերով օդը կը լեցնէինք, ինչպէս կ'ըլլայ որ տակաւին 35-40 տարիներ բաւական չեն ըլլար գաղափարը՝ իր գաղափարական վիճակէն հանելով դործօն վիճակի մը դնել:

Չենք հակառակիր կուսակցութեան, կուսակցութիւնը ազգի մը յառաջդիմութեան գլխաւոր տարրերէն մէկն է, սակայն ազտոտ կու-

սակցական կուրը և այն ալ յեղափոխական սուրբ գործին մէջ, կուսակցութիւնը՝ մահամերձ չըսեմ—այլ հիւանդ—ազգի մը համար եպերելի է և յաւիտեան դատապարտելի:

Մենք, մեր ունեցած այսքան անյաջողութիւնը միութեան կարելութիւնը չտալնու էր, երկրորդական կը համարեմ մեր գործիչ կուսակցութիւններու թերութիւնները: Ահա մեզ ասպարէշ բացուած է, ՄԻԱՆԱՆԻ, ձեռք ձեռքի տանք, Միութեան պսակը բոլորէնք ազի աչքերով, արտասուղ, տառապող հայրենիքին ոգիին վրայ որ կողբայ աւերեալ, Հայաստանի անկեալ վիճակին վրայ:

Եւ վստահ ըլլանք որ ալ մեզի համար անյաջողութիւնը այս վայրկեանէն կը դադրի, չեմ ըսեր թէ անպատճառ վառ յաջողութիւններ մեզի կը սպասեն, որովհետեւ խաբելու ալ չենք մեր ժողովուրդը, պէտք է զինքը դիտակից ընել իր ազգի կամ գէշ վիճակին, ու ալ յառաջ, մերն է Միութիւնը, մերն է ապագան:

Պարոն խմբագիր, դուք որ Միութիւն կը քարոզէք և այս ամենակարեւոր ու կենսական հարցով կը զբաղիք, ընդունեցէք մեր անկեղծ խորհուրդներն ալ, այն է որ Պոլսոյ հրիտասարդութիւնը ամենէն աւելի զգուած է Նազարէի, Արփիար, «Հիշակ», «Դրօշակ» ևն. անուններէն, անուն չուզեր, անունի համար չաշխատիր, մէկ բառ, մէկ դործ, ՅԵՂԱՓՈՒՄԻՒՆ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ:

Ի՞նչ ստորին բաներ, ամենուն ալ դիբքը եպերելի կը գտնենք, իրար վար զարնել, անոնք որ երբեմն էին այնքան սերտ բարեկամներ, իրար ստորնացնել, իրարու չհաւնել և ի՞նչ է եղբ—հացի խնդիր—, որովհետեւ արիւններու ահազին ճահիճի մը մէջէն հաց կ'ուզեն առնել, որովհետեւ դիակներու մէջէն կ'ուզեն որ իրենց «Փլիթօ» մը հանեն, մինչդեռ ասդին Սիմօն պէյի խեղճ տեւորները անօթի կը հեծեն բանտին մէջ:

Ո՛վ կրնայ ըսել որ մարդ կեանքի մէջ անթերի վիճակ կ'ունենայ, այլ սակայն, ճամբարս մարդը պարտի աշխատիլ քիչ թերանալ, տեղերնիդ մընացէք մեծ գործիչներ յեղափոխութեան, դուք որ անուն ունիք, դուք որ մեծ կ'անուանէք ինքզինք-

նիդ, յեղափոխութիւնը հաւասարութեան օրէնքէն ուղղակի ծնած է, և ժողովուրդն է որ պիտի յաջողցնէ այդ նուիրական գործը:

Եկէ՛ք ազնիւ հայեր, նորաբոյս պատանեակներ և օրիւրդներ Միութեան դրօշին տակ, թէև փայլուն անուն մը չէ, թէև փայլուն խոստումներ չունի, նետելիք ուռմբեր չունի և ոչ ալ Հնչակեան վեցհարուածեաններ, — որոնք Պապը-Սիւի պողոտային վրայ ածուրդի դրուեցան— չունի կ'ըսեմ բան մը, բայց ունի կը կրկնեմ Միութիւնը պիտի յաջողանալ և հապիւն թիւ մը, կը համակրի ամբողջ երիտասարդութիւնը միութեան, որովհետեւ սուրբ է այն, վըսեմ է այն:

* * *

Մեր ներկայ կացութիւնը երբեք դժացուցիչ չէ. ո՛չ տնտեսական, ո՛չ բարոյական և ո՛չ ալ ազգային տեսակէտով, թշուառութիւնը ամեն կողմ կը տիրէ և ի՞նչ բան մը կայ որ ժողովուրդին միտքը կը չարչարէ, այն ալ նոր ցոյցի մը վախն է:

Թէև չենք ալ կարծեր որ ըլլայ, բայց յանուն ազգութեան և մարդկութեան կը խնդրենք որ արդիւնէի այն ցոյցի գաղափարը՝ այն յեղափոխականներէն որոնք Եւրոպայի ազատ կլիմային տակ կը կտրեն, կը ջարդեն ուղածուն պէս, առանց խորհելու թէ ի՞նչ կ'ընեն:

Եւ ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ ունեցան կրկին Պոլսոյ ցոյցերը,—վըստաներ ալ ունեցան— և ի՞նչ օգուտ պիտի ունենայ երրորդ մը, զիտէք թուրք խուժանին պատրաստութիւնները, սօքա ալ ունին, սուր ալ ունին, վեցհարուած ալ ունին, ամենքը, մեզք չէ՞ մեր թշուառ ժողովուրդին, ի՞նչ սեփ, և ի՞նչ պէտք է ալ Պոլսոյ մէջ ցոյցը, ինչո՞ւ աչքերնիս դէպի Հայրենի-Երկիրը չդարձնենք, ինչո՞ւ մեր միացեալ ոյժերը հոն չկեդրոնացնենք, ինչո՞ւ ուզենք թուրք խուժանը մեր դէմ գրգռել, երբ օգուտ մը չպիտի ըլլայ և ջարդուինք պարապ տեղը որովհետեւ կեաւորներուն գէմ սաստիկ ատելութիւն կայ: Ե՛, ճանրմ, մեր կեանքը Կարոպայի՝ ցոյցի համակիր յեղափոխականներու ձեռքն է: Պահպանողական ըլլանք քիչ մը Պոլսոյ մէջ, բայց ներող երբեք, պիտի յաջողինք, պիտի խոնարհի թուրքին ճակատը, մերն է

ապագան, մեր ինկած և նուազած աչքերը պիտի բացուին և մեր ճակատները պիտի բարձրանան:

Նոր ցոյցի մը վտանգը իր արհաւիրքներով ու դարհուրանքներով կը պատկերանայ Պսալմի մէջ:

Խորհուրդ կուտանք զաղթական հայ-գաւառացիներու, որ չփորձուին թուրքիա վերադառնալ, որովհետեւ տեղացիները կարող են ազատիլ, սակայն գաւառացիները կը մնան բանտի մէջ, խեղճ ու թշուառ և օր մ'ալ չունենին կ'առնեն իրենց արեւմտեան հայրենիքը:

Կ. Պսալմի ՍԿԱՅՈՐԴԻ
2 Ապրիլ 97

ԴԵՌ ՍՊԱՍԵՆԵՐ

Զրկուած, հարստահարուած ու տառապող ժողովրդին Ս. Դատին պաշտպան կանգնել կարծող մեր գործիչները է՞ր կը յապաղին ելլել և ձեռք ձեռքի տուած մտիկ ընել այն ժողովրդի արդար տրտուելին և ճշմարիտ գանգատին: Ամեն ժամանակ աւելի հիմակ է որ միութեամբ դրածու պէտքը և առիթը կը ներկայանայ. ամեն ժամանակ աւելի հիմա է որ ժողովուրդը քննէ «Միութիւն» կը պահանջէ: Բայց դո՛ւք որ առանց քեր պաշտպանած ժողովրդի արդար պահանջին ականջ դնելու կը շարունակէք ձեր ք է ց ֆն ու կ ա մ ա կ ո Ր ու Թ Ի խ ն ը: Այո՛, դո՛ւք ի՞նչ տարբերութիւն ունիք այն թագաւոր հրէշներէն որք 19րդ լուսաւորեալ դարու նախադասին ու մուրն են... Միթէ հայի անուն ունենալով դո՛ւք կը կարծէք որ ձեզ ներքին է ձեր խոշոր «ես»ին համար խաղալ խեղճ ազգի ճակատագրին հետ, — ո՛չ պարոններ, մեզ համար դո՛ւք խող-խողող օտարէն իսկ աւելի ատելի էք, մենք, խեղճ և հարստահարուած ժողովուրդի զաւակներս, ձեր երեսին կը պոռանք. «թեւէ ենք ձեր էլ՝ ձեր գործին էլ վրայ»: Ի՞նչ շահեցաք իրարու միս ուտելով, իրարու հարուած տալով, հիմա ալ ի՞նչ կը խորհիք ընել: Մենք Տաճկաստանի տառապող հայերն ենք որ ձեզնէ կը պահանջենք ամեն անձնական հաշիւ մի կողմ ձգել, ամեն «ես»ի դատեր մոռնալ և յիշել մեզ. մենք անօթի ենք, մենք մերկ ենք, մենք ամեն ատենէ աւելի հիմա է որ կը տառապիրք և մեր այս

ճգնաժամին մէջ իսկ պատրաստ ենք ազգին ճշմարիտ շահերը փնտռող ճշմարիտ և անկեղծ գործիչներուն բանալ մեր գիրկը և մեր կեանքն ու գործունէութիւնը նուերել իրենց:

Մեր բնագաւառի սարերն ու ձորերը, դաշտերն ու հովիտներն արիւնով ներկուած և դետերն արիւն դարձած են և դո՛ւք որ ինքզինքնիդ մեր դատի պաշտպան կը ներկայացնէք և մեզ հրամայող ըլլալ կ'ուզէք, ինչո՞ւ անտարբեր մնացած մեր ճգնաժամին վրայ, իրարու հետ կը վիճէք ձեր «ես»ին և ձեր «փառք»ին համար: Ի՞նչ փառք և ի՞նչ անուն կը փնտռէք, եթէ ճշմարիտ ազգասիրութեան և ճշմարիտ պարտաճանաչութեան ձայնէն մղուած գործեցիք մինչև հիմա. ձեր փառքը և ձեր անունը ձեր խղճի ձայնին մէջ փնտռեցէք. իսկ եթէ դո՛ւք պարզապէս ձեր շահուն և անունին համար ըրիք մինչև հիմա և կ'ուզէք դեռ նոյնը շարունակել, ամօթ և նախատինք ձեզ, ոտակացէ՛ք ապագայէն... ազգի մը ճակատագրի ձեր ձեռքը խաղաղիկ չէ և չպիտի ըլլայ. ձեր ըրած անպատկառ գործը չկրնար մեր ազգային Սուրբ Դատն ու Մեծ-Յեղափոխութիւնը վիժեցնել, միայն մի քիչ կը յապաղեցնէ, բայց վերջապէս ժողովուրդը վստահ է իր պահանջին արդար ըլլալուն և իր Աստուծոյն հաւատացածին պէս կը հաւատայ թէ՛ օր մը իր աղաւթութիւնը ձեռք պիտի բերէ (և հեռու չէ այդ օրը) ու այն ատեն «վայ» ձեզ: Ժողովրդի արդար իրաւունքն ու պահանջը անտեսել ուզողները միշտ իրենց արժանի պատիժը դաժան են և պիտի գտնեն: Մենք անունի հետ գործ չունինք. մենք գործ կ'ուզենք. մենք «Հնչակ» կամ «Դրօշակ» չենք ճանչնար, մենք «Յեղափոխութիւն» կը ճանչնանք, մենք Արփիար կամ Նազարէի չենք ճանչնար, մենք Ազգ կը ճանչնանք:

Մենք պիտի ներենք ձեր գործած սխալներուն, երբ կը միանաք ձեռք ձեռքի տուած և կատարեալ արդարութեամբ, կատարեալ պարտաճանաչութեամբ և ճշմարիտ ազգասիրութեամբ գործէք, ահա՛ այն ատեն է որ ազգը ձեզի յաւէտ երախտապարտ պիտի մնայ:

Ահաւասիկ առիթը ներկայացած է, ժողովուրդը ձեզ ձեր գործէն պիտի դատէ և ոչ թէ ձեր անունէն, «ժառը իր պողի» կը ճանչցուի» ուրեմն

յուշուցէք պտուղնիդ որ ձեզ ճանչնանք: Անո՛նք որ ամեն անձնական հաշիւ մի կողմ ձգելով պիտի դան ազգային Մեծ ԴԱՏԻՆ և ՍՈՒՐԲ ԻՐԱԽԱՆՑ պաշտպան ըլլալ, ԱՆՈՒՆԵՆ ՄԻԱՅՆ մեր ճշմարիտ գործիչներն ու ճշմարիտ հայ եղբայրները. իսկ անոնք որ տակաւին խեղ և կամակոր մնան իրենց անամօթ ու ստոր «ես»ի դատին առջև, անոնք մարդ չեն, այլ վայրենի գաղաններ, անոնք հայ չեն, այլ հայութեան նախատինք ու մուր. թող սոսկան ապագայէն... մենք դեռ ողջ ենք և պիտի մնանք ու իրենցմէ հաշիւ պահանջենք...

1 Ապրիլ 97 Կ. ՊՈԼԻՍ ԳԻՍԱԿ

ՆԱԽԱԿ ԱՐԱԲԿԵՐԻՆ

Տէր Խմբագիր

«Միութիւն»ի Յունուար ամսաթուով ուղղած երեք հարցումներուն իմ և ընկերացս կողմէ կը փութամ պատասխանել. կը փութամ՝ վասնզի «Միութիւն»ի յիշեալ ամսաթիւը—7ը, առաջինն է որ պատեհութիւն կ'ունենանք կարգաւ, ուստի և կրնաք ըմբռնել թէ ի՞նչ կացութիւն ունինք և բնավայրենիս որքան աննպաստ է արտասահմանի յեղափոխական կոմիտէներու հետ հաղորդակցելու համար:

Ներեցէք մեր այս ակամայ յապաղման և ընդունեցէք մեր խոնարհ կարծիքը ի մասին ձեր առաջարկած երեք ամենակարեւոր և կենսական հարցումներուն:

Ա.—Ասիկա պատասխանի պէտք չունի: Միութեան համակիր ենք այնքան՝ որքան լաւ համոզուած ենք թէ մեր բաղձալի փրկութիւնը անով միայն կրնայ ըլլալ: Միութիւնը ուժն է:

Բ.—Այո՛, մինչև ցարդ եղած բոլոր յեղափոխական այլազան կուսակցութիւններու բացարձակ ձուլումը կը փափաքինք, այնպէս որ իրենց բոլոր գործունէութիւնը միասիրտ և համերաշխ ըլլայ, նոյն շաղով ընթանան ըզձալի պահանջները իրականացնելու և միահամուռ գործեն միմիայն հայ ազգութեան համար:

Գ.—Խնդիրը այնքան կենսական ու անհրաժեշտ է՝ որքան կ'արժէ գիմել կարելի եղած բոլոր միջոցներուն:— Զոհողութեամբ և միջնորդութեամբ:

կուսակցական պետերուն—վասն զի կ'ապահովեցնեմ թէ՛ արտասահմանի և թէ՛ գաւառի մասնաճիւղերը սիրայօժար կը համակերպին—գիմեւ անոնց ներքին վրափուկ զգացումներուն և կոչում ընել տեղի տալու ազգին միահամուռ պահանջին.— ողորքել, սիրաշահիլ և անոնք որ յաւատ կ'ընդդրմանան, անուղղաները՝ ձաղկել, լքել և արտաքսել։

Եսասէր—բռնակալը իրաւունք չունի այսքան գերազանցապէս սուրբ և անձնուէր գաղափարի անգամակիցներու ցանկին մէջ անուն ունենալու։ Այն որ իր «ես»ը ազգին չահէն վեր բռնել կը ժպտի. ազգն ալ այդպիսին նողկանքով ու արհամանքով կը ջախջախէ։

10 Մարտ 97

ՆԱՄԱԿ * * *

«Միութիւն»ի Յունուարի թիւը այսօր տեսայ, հոն դրուած հարցերուն կուգամ պատասխանել։

Ա. Հարցի պատասխանն է.— Այո՛, Միութիւն կ'ուզենք։

Բ. Հարցի առաջին մասը անգործնական ըլլալէ զատ կրնայ պատճառ դառնալ ներքին նորանոր դժուարութիւններու և ընդհարումներու. զի այս յեղափոխական մարմինները որք հասարակաց թշնամւոյն հետ կռուելէ աւելի իրարու հետ կռուեցան, եթէ այնքան դառն ու սուղ փորձառութիւններէ հտքը, Հայ ժողովրդի ներկայ սոսկալի իրականութեան հրաբորբոք քարաին մէջ—ուր քարերը պէտք է հալին—տրմադիր չեն ըլլար հալուելու և զտուելու, եթէ Հայ ժողովրդին զբոխը մէջ իրենց կուսակցական այս ու այն ձեւը կարծր պահել կը ջանան, չէ՞ք կարծեր թէ այդպիսիներուն համերաշխութիւնը վեց պետութեանց «քօնսօս»էն աւելի խայտառակ բան մը կ'ըլլայ։

Պէտք է Հայ ժողովուրդը ունենայ Մէկ ԴՐՕՇԱԿ, Մէկ ՆՊԱՏԱԿ, Մէկ ԲԱՆԱԿ եւ պիտի ունենայ, երբ ինք կամի. զի յեղափոխական մարմիններու ծնունդ ու սնունդ տուողն ինք—ժողովուրդն է—յեղափոխական երկայնքի սուրբն տալիք «Ազատութիւն կամ մահ»ը նոյն ժողովրդին կը վերաբերի. ուստի նա իրաւունք ունի պահանջելու որ յեղափոխական մարմինները միանաւ զուտ ազգային հողին վրայ։

Պէտք է որ Հայ ժողովուրդը գիտնայ թէ ալ վրէժխնդրութիւնը Հայոց ժառանգական դարձած է, յեղափոխական ոգին Հայ սրտերու մէջ չմարելիք կրակ դարձեր է, նա մեր արեան մէջ արիւն և մարմինն մէջ մէջ մարմին է ահա, ուզենք կամ չուզենք՝ յեղափոխական կայծերը և անոնց արդիւնք եղող հրդեհները Հայաստանի ամեն կողմը անպակաս պիտի ըլլան, մանաւանդ որ թիւրք անխիանութիւնն ալ—մեռնիմ ողորմութեանը—մէկ յեղափոխականի մը պատճառաւ ամբողջ քաղաք մը և քաղաքներ, գաւառ մը և գաւառներ սուրի, հուրի և կողոպուտի կը մատնէ, առանց զանազանութեան և խտրութեան, կ'ըսեմ, Հայ ժողովուրդը պէտք է որ գիտնայ, թէ ոչ մէկը որ Հայը և որ կը բնակի Հայաստանի մէջ, յեղափոխութեան բռնելիք աղէտներէն կրնայ ըլլալ ազատ, մինչև որ Հայաստան ըլլայ ազատ, ուստի պէտք է որ ժողովուրդը յեղափոխութեան—իր գործին—տէր ըլլայ, այն գործին որ իր ճակատագրին հետ կը խաղայ։ Գործի յաղթանակը զօրութիւնով կը տարուի. «Միութիւն է զօրութիւն» ժողովուրդը պէտք է ստեղծէ այդ զօրութիւնը։

«Դաշնակցական» կոմիտէները և «Հնչակեան» մասնաճիւղերն իրենց պաշտօնական եղանակներով և առհասարակ ժողովուրդը մասնաւոր ժողովի գումարելով միութեան զօրաւոր պահանջներ գրելու են Հնչ. կեդրոնական վարչութեան ի Լոնտոն և «Իրօշակ»ին ի Ժնեւ, պահանջելու են որ այդ երկու մարմինները հարկ եղած տնօրէնութիւններով մէկտեղ գան, միութեան համար բանակցին և արդիւնքը յայտնեն. եթէ չհամաձայնին, նոյն իսկ իրենց բանակցութիւնները հրատարակեն՝ որպէս զի ժողովուրդը անոնց նայելով դատէ իրաւը և անիրաւը։

Այո՛, ժողովուրդը դատաւոր լինելու է և խնդրոյն վրայ նայելու է այնպէս ինչպէս Սողոմոն նայեցաւ այն երկու կիներուն՝ որք իրեն ներկայացան իւրաքանչիւրը նոյն մանկան համար ըսելով թէ նա իր զաւակն է։ Ինչպէս Սողոմոն ըսաւ. սուրը ձեռքը առնելով «Բերէք որ բաժնեմ մանուկը. անոր կէսը մէկիդ ու կէսը միւսիդ տամ»։ «Բաժնեմ կտրեմ. կիսեմ.» ահա փորձաքարը որ հարազատ մօր սիրտը երեւան բերաւ, որուն գուրգուրանքով սուաւ ըսելով. «Ո՛չ տէր իմ, մի՛ կիսեր, թող ամբողջը անորը ըլլայ», մինչ անհարազատ մայրը պաղարեամբ կըսէր

Այո՛ տէր, կիսէ՛, կէսը անոր և կէսը ինծի։ Այսպէս թող Հայ Յեղ. ուժերու միութեան հարազատ և անհաւաքաւ—եթէ կան—բարեկամները երեւան գան, թող ժողովուրդը պատժէ անհարազատը՝ թողով զայն անսնունդ և վարձատրէ հարազատը. տալով անոր պէտք եղածները, որ ապրի, զարգանայ ու զօրանայ և ըլլայ այն մի բանակը—Միութիւն ԲԱՆԱԿ—մի գրօշակով և մի նպատակով։

Գ. ՉԻԹՃԵԱՆ

97 Մարտ 15 Բէմալքիճ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Գոհունակութեամբ ստացանք Ամերիկայի Լօվրէնս քաղաքի ի նպաստ Միութեան փաղափարի իրականացման ժողովի Շրջաբերականը, զոր սիրայօժար կը հրատարակենք։

Սիրելի Հայրենակիցներ

Լօրէնսի Հայ գաղթականութեան կողմանէ կազմեալ յանձնախումբս՝ արտօնեալ է գրել և խնդրել Ձեզ, որ բարեհաճիք դուք ևս տեղւոյս Հայ գաղթականաց նման ժողովներ կազմելով՝ միաձայն հաւանութեամբ որոշէք նամակներ գրել Հնչակեան և Դաշնակցական կուսակցութեանց կիւրոնները, ստիպելով զանոնք, որ միութեան համար լուրջ բանակցութիւններ և խորհուրդներ կազմեն և ապա աշխատին ընդ փոյթ միանալով Միութեան անհրաժեշտութիւնը, մենք վստահ ենք թէ դուք ալ լաւ ըմբռնած էք. և գիտէք թէ Հայուն իւր վերքերուն միակ դարմանը, Միութիւնը միայն կրնայ ըլլար. մենք չենք կարծեր թէ պիտի գտնուին այնպիսիներ, որ անտարբեր և ցուրտ աչօք նային այս կարեւոր խնդրոյն վրայ։

Արդարեւ թշնամւոյն հարուածները մեզ փշրեցին, սակայն իմաստութիւն և քաջութիւն չէ՞ միթէ այդ վերքերունքները ի մի հաւաքել, ձուլել և պնդացնել. վերստին թշնամւոյն հանդէպ ելլելու և ազատութեան սուրբ մարտը վերսկսելու համար։

Ուստի կը խնդրենք բոլոր Ազգայիններէ, որ յանուն իրենց մարգարեաց և յանուն իրենց կրօնի, միութեան այս կենսական խնդիրը բնաւ չյետաձգեն և մի րոպէ առաջ որոշելու և պէտք եղած նամակները յանձնախումբերու միջոցաւ պատրաստելն ղկնի, ի լուր տեղւոյն Հանուր Հայ ժողովրդի, ժողովներու մէջ կարգացուի, որով կը յուսանք թէ ամեն անհատ սիրով պիտի ստորագրէ և պիտի ստորագրեն նաև տմեն քաղաքի իւր կուսակցական մարմինները ևս, ինչպէս ըրած և կարգադրած ենք մենք։

Մնամբ փափաքողք միութեան ի դիմաց Լօրէնսի ժող. Յանձնախումբին 97 Մարտ 11, Լօրէնս

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»